Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
հունիսի 9-ի նիստի N 22
արձանագրային որոշման

Պայմանագիր No.NUC-1-14-1092(2)

Փոփոխություն թիվ 2

Գնման համաձայնագրի
(NUC-1-14-1092)

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
(որպես Գնորդ)

և

«Նուքթեք» ՍՊԸ
(որպես Վաճառող)
և
Հայաստանի Հանրապետության ԿԱ պետական եկամուտների կոմիտե
(որպես Նոր Գնորդ)

միջև

Սույն Փոփոխություն 2-ը ստորագրված է _____ 2016թ. և կատարված է

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, որի գրանցված գրասենյակը գտնվում է Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք Ադամյան փողոց 1 հասցեով և այսուհետ պատշաճ կերպով ներկայացված նախարարի տեղակալ պրն. Արմեն Գևորգյանի կողմից

(այսուհետ՝ **«Գնորդ»)**

և

«Նուքթեք» ՍՊԸ-ի, որի գրանցված գրասենյակը գտնվում է Չինաստան, 100084, Պեկին, Հայդյան շրջան, Շուանքինգլու, Թոնգֆենգ շ., 2/F մասնաշենք հասցեում և այսուհետ պատշաճ կերպով ներկայացված _____ կողմից

(այսուհետ՝ **«Վաճառող»)**

և

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի, որի գրանցված գրասենյակը գտնվում է Հայաստանի Հանրապետություն, Երևան 0015, Մովսես Խորենացի փողոց 3 հասցեով և այսուհետ պատշաճ կերպով ներկայացված նախագահի առաջին տղակալ պրն. Արթուր Աֆրիյանի կողմից
(այսուհետ՝ **«Նոր Գնորդ»)**

Քանի որ:

2014 թվականի նոյեմբերի 14-ին Գնորդի և Վաճառողի միջև ստորագրվել է «Մաքսային կառավարման, տեխնոլոգիայի և սարքավորումների արդիականացման ծրագրի համար» 155,439,953.00 չինական ռենմինբին արժողությամբ (այսուհետ՝ «**Պայմանագրի գին**») թիվ NUC-1-14-1092 Գնման պայմանագիրը (այսուհետ՝ «**Պայմանագիր**»):
Վաճառողը պետք է տրամադրի արդիական տեխնոլոգիաների արտադրության սարքավորումներ Բեռների / Ավտոմեքենաների / Գնացքների / Մարմնի Զննության Համակարգերի (այսուհետ՝ Տեսածրիչ), Մաքսային Զննության Կենտրոնացված Վերահսկման համակարգերի (այսուհետ՝ Ինտեգրված Համակարգ) համար: Վաճառողը համաձայնել է տրամադրել տեխնոլոգիաներ և սարքավորումներ՝ համաձայն Պայմանագրի դրույթներին և սահմանումներին:
Գնորդն ու Վաճառողը այսուհետ համաձայնվում են կատարել 2015թ. հունիսի 19-ին կատարված թիվ NUC-1-14-1092 Պայմանագրի փոփոխությունը (այսուհետ՝ թիվ 1 Փոփոխություն)՝ ծրագրի իրականացման ավելի սահուն ընթացքն ապահովելու նպատակով:

Ծրագիրը շարունակվում է իրականացվել և 155,439,952.21 ռենմինբին ընդհանուր արժեքից 132,245,957.01 ռենմինբին արժողությամբ վճարումները Գնորդի կողմից կատարվել են Վաճառողին մինչև սույն Փոփոխություն 2-ի ստորագրումը:

Հաշվի առնելով սույնով ներառված փոխադարձ պայմանավորվածությունները, այլ արժանահավատ և արժեքավոր դիտարկումները, որոնց ստացումն ու բավարարումը սույնով ընդունված են, կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

Հոդված 1՝ Մեկնաբանում

1. Դրույթին կամ Ժամանակացույցին հղումը Պայմանագրի Դրույթին կամ ժամանակացույցին հղում է:
2. Դրույթի կամ Ժամանակացույցի վերնագրերը հղումը հեշտացնելու/ պարզեցնելու համար է և չպետք է հաշվի առնվի սույն Փոփոխությունը մեկնաբանելիս
3. Մեծատառերով նշված դրույթները նույն նշանակությունն ունեն ինչ Պայմանագրում
4. Եզակին ներառում է հոգնակին (և հակառակը):

Հոդված 2՝ Պայմանագրի պարտավորությունների փոխանցում

«Համաձայն ՀՀ Նախագահի մարտի 1-ի թիվ ՆՀ-213-Ն հրամանագրի՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությունից առանձին ՀՀ կառավարությանն առընթեր մարմին է, և համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 17-ի թիվ 329-Ն որոշման 3-րդ մասի 1-ին կետի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Չինական Արտահանման-ներմուծման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետության մաքսային զննման տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացման» ծրագրերի շրջանակներում ստանձնված պարտավորությունները փոխանցվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմին:»
Կողմերը սույնով փոփոխում են Պայմանագիրը, որով դադարում է դրանով սահմանված Վաճառողի և Գնորդի միջև պայմանագրային հարաբերությունները, և ստեղծվում է Վաճառողի և Նոր Գնորդի միջև նոր պայմանագրային հարաբերություններ՝ Պայմանագրի և Փոփոխություն 1-ի դրույթների և սահմանումների ներքո:
Տարակարծություններից խուսափելու և վերոգրյալը չսահմանափակելու նպատակով նման Պարտավորությունների փոխանցումը կունենա հետևյալ ազդեցությունը.
Ա. Վաճառողը, Գնորդը և Նոր Գնորդը սույնով ընդունում են Պայմանագրի և Փոփոխություն 1-ի վավերականությունը:
Բ. Նոր Գնորդը պարտավորվում է Պայմանագրով և Փոփոխություն 1-ով՝ դրանով սահմանվող Գնորդի բոլոր իրավունքները կրելով և դրանով սահմանված Գնորդի բոլոր պարտավորությունները կատարելով, յուրաքանչյուր դեպքում, նկատի ունենալով, որ Նոր Գնորդը դրա սկզբնական կողմն է հանդիսանում:
Գ. Գնորդը պետք է ազատված լինի Պայմանագրի և Փոփոխություն 1-ի ներքո բոլոր պարատավորություններից:
Դ. Պայմանագրով և Փոփոխություն 1-ով Գնորդին կատարվող բոլոր հղումները համարվում են Նոր Գնորդին ուղղված հղումներ:

3. Պայմանագրի հոդվածների փոփոխություն
1. 5.4.2.4 ենթահոդվածը պետք է փոփոխվի հետևյալ կերպ: Յուրաքանչյուր խմբաքանակի Պայմանագրային մնացյալ արժեքի տաս տոկոսը (10%) պետք է Գնորդի կողմից Վաճառողին վճարվի տասնհինգ (15) օրվա ընթացքում համապատասխանաբար՝ հետևյալ փաստաթղթերը ներկայացնելուն պես.
1.1 Ապրանքների Վերջնական ընդունման փորձարկումն ավարտելոց հետո՝ ներառյալ

4 խմբաքանակ MT1213LH, 2 խմբաքանակ CS1000T, 2 խմբաքանակ BX1000DA և 2 խմբաքանակ BI2002
(a) Մնացած Ապրանքների արժեքի տաս տոկոսը (10%) ծածկող Վաճառողի ստորագրված հաշիվ-ապրանքագրի մեկ (1) բնօրինակ և երեք (3) պատճեններ;
(b) Ապրանքների համար Վերջնական Ընդունման Փորձարկումների Վկայագրի մեկ (1) օրինակ՝ ստորագրված Նոր Գնորդի Լիազորված անձի և Վաճառողի Լիազորված անձի կողմից:
1.2 Վերջնական ընդունման փորձարկումների համար մնացած ապրանքներ, ներառյալ Մաքսային հսկողության կենտրոնացված վերահսկողության 1 խմբաքանակ, Մոնիթոր համակարգի 1 խմբաքանակ և 1 խմբաքանակ RF6010.
(a) Մնացած Ապրանքների արժեքի տաս տոկոսը (10%) ծածկող Վաճառողի ստորագրված հաշիվ-ապրանքագրի մեկ (1) բնօրինակ և երեք (3) պատճեններ;
(b) Սույն փոփոխություն 2-ին կից հավելված 1-ով սահմանված 1,212,278.9 ԱՄՆ դոլար (մեկ միլլիոն երկու հարյուր տասներկու հազար երկու հարյուր յոթանասունութ ամբողջ ինը) արժողությամբ՝ համարժեք 7,455,515.24 ռենմինբինի (յոթ միլիոն չորս հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր տասնհինգ ամբողջ քսան չորս), «Գումարի պահման երաշխիքի նմուշի» 1 բնօրինակ՝ Նոր Գնորդի կողմից:

2. Պայմանագրի Հավելված 4-ը՝ Վճարման ժամանակացույցը փոփոխված է ըստ սույն Փոփոխության Հավելված 2-ի:
3. Պայմանագրի Հավելված 8-ով սահմանված Առաքման ժամանակացույցի փոփոխություն. Հաշվի առնելով Ֆորս-մաժորային իրավիճակը և ՀՀ ֆինանսների նախարարության վերակազմավորումը՝ ամբողջ առաքման վերջնաժամկետը պետք է երկարաձգվի մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը:

Հոդված 4՝ Այլ դրույթներ
Սույն Փոփոխություն 2-ը հանդիսանում է Պայմանագրի անբաժան մասը:
Պայմանագրի և Փոփոխություն 1-ի բոլոր այլ պայմաններն ու դրույթները սույն Փոփոխություն 2-ով չեն փոփոխվում, մնում են անփոփոխ և սույն Փոփոխություն 2-ի դրույթներն առավել առաջնահերթ են:

Հոդված 5՝ Ուժի մեջ մտնելը
Սույն Փոփոխություն 2-ը ուժի մեջ է մտնում Գնորդի, Վաճառողի և Նոր Գնորդի համար սույն Փոփոխություն 2-ի ստորագրման օրվանից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝
Գնորդը, Վաճառողը և Նոր Գնորդը, այսպիսով, ստորագրեցին սույն թիվ 2 Փոփոխությունը՝ երեք բնօրինակների պատճեններով՝ յուրաքանչյուր կողմ պահպանելով 3 ստորագրված բնօրինակ:
Սույն Փոփոխություն 2-ը ուժի մեջ է մտնում և պարտադիր դառնում Նոր Գնորդի և Վաճառողի համար, և ենթակա է կիրարկման դրա պայմաններին համապատասխան:

Գնորդի կողմից՝

ՀՀ ֆինանսների նախարարություն

_____ _____

Վաճառողի կողմից՝

«Նուքթեք» ՍՊԸ

_____ _____

Նոր Գնորդի կողմից՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

_____ _____